

95 էր՝ Մուրատ Մարգարէի որդի. սա զիտաշան  
 երեւր պատիւ ի տուն իւր, ամէն հեծեւօք. եւ  
 կերակրեց առանց կրակի. եւ երկրորդ օրն կե-  
 րակրեց եփած ուտելով զայնչափ մարդիկ.  
 սյրեւծիոց զարման եւ զարի նա ինքն միայն  
 100 երես :

Եւ անդ<sup>3</sup> եւս մեծամեծ աներ էին, որ-  
 պէս Սելւստու : Անդ տեսաք մէկ տունն քառ-  
 սուն օրոցք. եւ ամէնքն հօրն հնազանդ. եւ թէ  
 հայրն մեռանէր՝ մեծ եղբօրն հնազանդէին.  
 105 եւ այսպէս մեծ սէր եւ միաբանութիւն մեծ  
 տեսաք երկիրն այն, զոր այլ տեղ երկու եղ-  
 բարք կամ երկու քոյրք ոչ կարեն ի միասին  
 բնակել ի միում տան : Եւ էին սիրով Հայք ընդ  
 Ասորիս. զի ազջիկ տային եւ առնուին. եւ թէ  
 110 ոք Հայոց մեռանէր՝ զԱսորոց երէցն կոչէին  
 ի թաղունն եւ Ասորոցն՝ զՀայոց քահանայս.  
 եւ ամէնքն հայ լեզու զրուցէին : Կայր ի միջի  
 նոցա եւ Հոռմի գեղօրայք. որ եւ նոքա ազջիկ  
 տային եւ առնուին. եւ նոքա մեծ սէր ունին  
 115 ընդ Հայս եւ միաբանութիւն, եւ Հայոց լե-  
 զուաւ խօսին. եւ չես ճանաչել, հայ է թէ հո-  
 ոռմ եւ ո՛րն ասորի. զի չիք խտիր առ նոսա  
 եւ ոչ մի ինչ :

ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւ կացի առ Վարդապետն երկու շաբաթ,  
 120 զոր շատ բարութիւն եցոյց ինձ. եւ խրատ ետ

98 մարդիք : — 99 յինքն :

<sup>3</sup> Ի Խարբերդ :